

**ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՃԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՇԱԽՄԱՏԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Մանուկյան Մ.Ա. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

mariam.manukyan9@ysu.am

Ներկայացման ամս.՝ 24.07.2019

գրախոսման ամս.՝ 28.07.2019

տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Հոդվածը նվիրված է որոշման կայացման, մտածողության առանձնահատկությունների և անձնային գծերի միջև կապի ուսումնասիրմանը՝ ինտելեկտուալ գործունեությունում: Այդ նպատակով կատարել ենք հետազոտություն, որի ընտրանքն են կազմել շախմատիստները և տեխնիկական կրթություն ունեցող անձինք: Դուրս ենք բերել ստատիստիկ նշանակալի կապեր անձնային գծերի, որոշման կայացման անհատական կարգավորման միջոցների, մտածողության ոճերի միջև:

Հանգուցային բառեր. *մտածողության ոճեր, ինտելեկտուալ գործունեություն, որոշման կայացման անհատական կարգավորման ոճ, անձնային գծեր, շախմատիստներ:*

Հայաստանը շախմատային գերտերություն է, դրա մասին են վկայում ոչ միայն հաղթանակները հեղինակավոր մրցաշարերում այլ նաև շախմատին նվիրված գիտական հետազոտությունները, որոնք իրականացվում են վերջին տարիներին: Շախմատը ինտելեկտուալ խաղ է, որտեղ հաջողություններ գրանցելու համար կարևոր է լավ ճանաչել ինքդ քեզ և հակառակորդին, այդ իսկ պատճառով՝ ուսումնասիրություն իրականացնելիս կարևոր է ուշադրություն դարձնել շախմատիստի անձնային գծերին, որոշման կայացման և մտածողության ոճերի առանձնահատկություններին: Կարևոր է նաև ինտելեկտուալ գործունեություն իրականացնողների մոտ դուրս բերել մտածողության ոճերի, որոշման կայացման դրսևորումների և անձնային գծերի միջև կապերը:

Մտավոր ինքնակարգավորման տեսությունը դուրս է բերում մարդկանց մտածողության ոճերը: Դրանք սեփական ունակությունները դրսևորելու նախընտրելի տարբերակներ են: Մարդիկ իրենց գործունեությունը կազմակերպելու հարցում ընտրում են իրենց համար հարմարավետ ոճեր: [9] Շտերնբերգը մտածողության ոճը սահմանում է, որպես մտածողության ձև: Այն ընդունակությունն է, այլ ընդունակությունները օգտագործելու ու դրսևորելու մեթոդ: Նույն ընդունակությունները ունեցող մարդիկ կարող են ունենալ և զարգացնել բոլորովին տարբեր մտածողության ոճեր: Բացի դրանից, իրավիճակով պայմանավորված, կարող են օգտագործվել տարբեր մտածողության ոճեր : Մտածողության ոճը ցույց է տալիս, թե ինչպես ենք օգտագործում այն կոգնիտիվ ընդունակությունները, որոնց տիրապետում ենք: [7] Այսպիսով անկախ կոգնիտիվ ունակություններից, գործունեությունը

արդյունավետ կազմակերպելու համար մարդիկ ընտրում են տարբեր մտածողության ոճեր, ընդ որում մտածողության ոճի ընտրության վրա կարող են ազդել իրավիճակային գործոնները:

Որոշման կայացումը իրենից ներկայացնում է ընտրելու գործընթաց, որտեղ լուծման երկու կամ ավելի տարբերակներից ընտրվում է այն, որը կօգնի հասնել ցանկալի նպատակին: [8] Գործընթացի վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ՝ անձնային առանձնահատկություններ, իրավիճակի բնութագրիչներ, գործունեության նպատակներ և այլն: [4] Բոլոր մարդիկ մտածում են և ունեն որոշակի ընդունակություններ, սակայն դրանք դրսևորվում են տարբեր կերպ, դա պայմանավորված է մտածողության ոճով, կարևոր է հասկանալ թե ինչպես են փոխկապակցված մտածողության ոճերը և անձնային գծերը: Գրականության մեջ հանդիպում են հետազոտություններ, որոնք ուսումնասիրում են մտածողության ոճերի և անձնային գծերի կապը: Ժանգը դուրս է բերել կապեր մտածողության ոճերի և Հոլանդի դուրս բերած անձնային տիպերի միջև: Այլ հետազոտության շրջանակներում Ժանգը դուրս է բերել մտածողության ոճերի կապը անձնային գծերի հինգ գործոնների միջև: Օրինակ՝ էքստրավերսիայի և բարյացակամության սանդակները դրականորեն էին կոռելացվում մտածողության ոճի արտաքին տիպերի հետ, իսկ նեյրոտիզմը դրականորեն էր կոռելացվում կոնսերվատիվ մտածողության հետ:[9]

Որոշման կայացման վրա ազդում են գործոնների երեք համակարգ՝ որոշման առանձնահատկություններ, իրավիճակային գործոններ և անհատական տարբերություններ: Որոշման կայացում ուսումնասիրելիս, պետք է հաշվի առնենք թե ինչպես են այս համակարգերը փոխազդում: [6] Անհատական առանձնահատկությունները ազդում են ոչ թե որոշման կայացման որակի վրա, այլ նրա վրա թե ինչպես են կայացվում որոշումները:[4]

Այժմ անդրադառնանք ինտելեկտուալ գործունեության առանձնահատկություններին: Ինտելեկտուալ գործունեությունը գործողությունների շարք է, որը ցույց է տալիս թե ինչպես են իրացվում գիտելիքները և թե ինչպես են կանոնների հիման վրա հին փաստերից նոր փաստեր առաջանում: Ինտելեկտուալ գործունեության զարգացումը բերում է մտավոր սեփականության նոր օբյեկտների առաջացմանը:[5] Ինտելեկտուալ գործունեությունում որոշման կայացման որակի վրա կարող են ազդել այնպիսի գործոններ ինչպիսիք են գիտելիքների առկայությունը և կիրառումը, սակայն պետք չէ նաև անտեսել անհատական առանձնահատկությունների և հուզական վիճակների դերը:

Ինչ վերաբերվում է շախմատիստների գործունեությանը, ապա վերջինիս հոգեբանական վերլուծության անհրաժեշտությունը պայմանավորված է երկու կողմերի միջև հակամարտությամբ: Խաղի ընթացքում առաջ եկող դիրքերը կրում են պրոբլեմատիկ բնույթ և բերում են որոշման կայացման անհրաժեշտության, քայլի ընտրությունը որոշ չափով կապված է ոչ միայն գիտելիքներից և փորձից, այլև շախմատիստի անհատական առանձնահատկություններից՝ խառնվածք,

բնավորություն, մտածողության ոճ և այլն: Բյուսենֆելդը նշում է, որ երբեմն շախմատիստի պրակտիկ ուժը չի համապատասխանում խաղի հասկացմանը: Հաճախ ուժեղագույն շախմատիստներին մոտ դիտվում են թույլ, մակերեսային քայլեր և շատ կոպիտ սխալներ: Շախմատիստի մտածողության արդյունավետությունը պայմանավորված է հիշողությամբ, ընկալման ավտոմատիզացիայով և այլն: [3] Իսկ հիշողությունը իր հերթին կախված է հուզական բաղադրիչների հետ: Շախմատում մտավոր գործունեության և հուզականային ոլորտի կապի ուսումնասիրումը շատ կարևոր է: Հաճախ, ժամանակի պակասի դեպքում շախմատիստը մտածում է կոնկրետ քայլեր և տարբերակներ՝ հիմնվելով դիրքի զգացման վրա: [2] Դյակովը, Պետրովսկին և Ռուդիկը կազմել են շախմատիստի հոգեգրամման, նրանք առանձնացրել են այն 16 անձնային առանձնահատկությունները, որոնք պայմանավորում են շախմատում հաջողության հասնելը: Այդ հատկությունների մեջ են մտնում ֆիզիկական ուժերի ու առողջության մեծ պաշարը, ուշադրության հավասարաչափ բաշխումը, մտածողության օբյեկտիվ և առարկայական բնույթը, հույզերի և աֆեկտների կառավարումը, ինտելեկտուալ գործընթացների բարձր ակտիվությունը և այլն: [1] Այսպիսով ակնհայտ է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել շախմատիստների կոգնիտիվ որակների առանձնահատկությունները, քանի որ դրանք հանդիսանում են հաջողության հիմնական գրավականը, սակայն հետազոտությունները ցույց են տվել, որ ոչ պակաս կարևոր են նաև անհատական առանձնահատկությունները՝ հուզականային ոլորտ, անձնային գծեր և այլն:

Մեր կողմից իրականացվել է հետազոտություն, որը ուղղված է մտածողության ոճերի, որոշման կայացման անհատական կարգավորման միջոցների և անձնային գծերի ուսումնասիրմանը: Հետազոտության ընտրանքն են կազմել 67 հետազոտվողներ, երկու խմբերով՝ շախմատիստներ և տեխնիկական կրթություն ունեցողներ: Շախմատիստների խումբը կազմված է միջազգային գրոսմայստերներից, միջազգային վարպետներից և առաջին կարգային շախմատիստներից, դուրս ենք բերել նրանց միջազգային վարկանիշները ըստ ՖԻԴԵ-ի վարկանիշային աղյուսակի՝ 2018թ մայիսի 1-ի դրությամբ:

Հետազոտության իրականացման համար կիրառել ենք հետևյալ 3 մեթոդները: 1) *Անձնային գծերի «Մեծ Հնգյակ»* (Big Five Inventory) հարցարանը, որը մշակվել է ամերիկացի հոգեբաններ ՄաքԿրաեյի և Կոստայի կողմից: Այն դուրս է բերում հինգ գործոններ՝ էքստրավերսիա, բարյացակամություն, բարեխղճություն, նեյրոտիզմ և փորձի նկատմամբ բացություն: Հարցարանի հինգ բալերից կազմված գնահատման սանդղակի միջոցով կարող ենք դուրս բերել յուրաքանչյուր գործոնի արտահայտվածության աստիճանը: 2) *Մելբուրնյան որոշման կայացման հարցաթերթիկ* (Melbourne Decision Making Questionnaire), որը ուղղված է ֆիքսված անորոշության պայմաններում որոշման կայացման անհատական կարգավորման տեսակների բացահայտմանը: Հարցարանը կազմված է 22 համոզմունքներից, որոնց հետ համաձայնությունը գնահատվում է 1-3 բալով: Այն դուրս է բերում 4 հատկանիշ, որոնք վկայում են պրոդուկտիվ (զգոնություն-vigilance) և ոչ պրոդուկտիվ

(խուսափում-back-passing, հետաձգում-procrastination և գերզգոնություն-hypervigilance) կոպիճների մասին: 3) *Հարիսոնի և Բրեմսոնի կողմից մշակված «Մտածողության ոճեր» հարցարանը*, որը նախատեսված է նախընտրած մտածողության ոճի, հարցեր տալու և որոշման կայացման եղանակների դուրս բերման համար: Այն դուրս է բերում հինգ մտածողության ոճ ` սինթետիկ, իդեալիստական, պրագմատիկ, անալիտիկ և ռեալիստական: Հարցարանը կազմված է 18 պնդումից, որոնք էլ իրենց հերթին բաղկացած են 5 տարբերակից:

Հետազոտության տվյալները վերլուծվել են SPSS IBM Statistics 22.0 վիճակագրական ծրագրով: Սկզբում ցույց տանք հարցարաններից դուրս բերված տվյալների բաշխվածությունները ըստ Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշի: Անձնային գծերի «Մեծ Հնգյակ» հարցարանից դուրս բերված բոլոր գործոնների տվյալների բաշխվածությունը նորմալ է $p > 0.05$, այստեղից հետևում է, որ վերլուծությունը իրականացնելիս կարող ենք օգտվել Պիրսոնի գործակցից: Մեյլուրնյան որոշման կայացման հարցաթերթիկից ստացված բոլոր գործոնների տվյալների բաշխվածությունը նորմալ չէ $p < 0.05$, այսինքն վերլուծությունը իրականացնելիս, պետք է օգտվենք Սպիրմենի գործակցից: Հարիսոնի և Բրեմսոնի «Մտածողության Ոճեր» հարցարանից դուրս բերված հինգ գործոններից չորսի դեպքում առկա է նորմալ բաշխվածություն $p > 0.05$ -ից, միայն անալիտիկ մտածողության ոճի տվյալները ընտրանքում նորմալ չեն բաշխված $p = 0.007$, $p < 0.05$: Հետևաբար բոլոր տվյալների դեպքում կկիրառենք Պիրսոնի գործակիցը, իսկ անալիտիկի դեպքում ` Սպիրմենի գործակիցը: Շախմատիստների վարկանիշների տվյալների հետ աշխատելիս ևս պետք է կիրառենք Սպիրմենի գործակիցը քանի որ բաշխվածությունը նորմալ չէ $p < 0.05$:

Փորձել ենք դուրս բերել որոշման կայացման անհատական կարգավորման տեսակների և անձնային գծերի փոխկապակցվածությունը: Քանի որ Մեյլուրնյան որոշման կայացման հարցաթերթիկից ստացված բոլոր գործոնների տվյալների բաշխվածությունը նորմալ չէր օգտվել ենք Սպիրմենի կոռելյացիոն գործակցից:

Աղյուսակ 1.

Անձնային գծերի և որոշման կայացման անհատական կարգավորման տեսակների փոխկապակցվածություն

Գործոններ		Խուսափում	Հետաձգում	Գերզգոնություն
Բարեխղճություն	Սպիրմենի կոռելյացիոն գործակից	0.363**	0.372**	
	Նշանակալիության գործակից	0,003	0.002	
Նեյրոտիզմ	Սպիրմենի կոռելյացիոն գործակից	0.297**	0.619**	0.767**
	Նշանակալիության գործակից	0.016	0.0001	0.0001

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, առկա են ստատիստիկ նշանակալի դրական կապեր նեյրոտիզմի և որոշման կայացման անհատական կարգավորման

տեսակներից հետաձգման, խուսափման և գերզգոնության միջև: ($r=0.297$, $p=0.016$, $r=0.619$ $p=0,0001$, $r=0.576$ $p=0.0001$): Այսինքն մարդիկ ուլքեր ունեն նեյրոտիզմի բարձր մակարդակ որոշում կայացնելիս հաճախ խուսափում են որոշումից հետաձգում են այն՝ ռացիոնալիզացնելով մեծ թվով այլընտրանքներ և փախչելով պատասխանատվությունից: Դրսևորում են նաև գերզգոնություն, ինչը նշանակում է որ իրականացնում են իմպուլսիվ որոշման կայացում: Նաև հայտնաբերվել է ստատիստիկ նշանակալի բացասական կապ բարեխղճության և որոշման կայացման անհատական կարգավորման միջոցներից խուսափման և հետաձգման հետ ($r=0.363$, $p=0.003$, $r=0.372$ $p=0.002$): Այսինքն որքան ցածր է բարեխղճության ցուցանիշը այնքան հավանական է, որ որոշում կայացնելիս կորսևորվի խուսափում և հետաձգում: Բարեխղճության գործոնի ցածր ցուցանիշները խոսում են պատասխանատվություն ստանձնելու, հուսալի լինելու, հավակնություններ ունենալու հետ կապված խնդիրների առկայության մասին:

Փորձել ենք կապ գտնել որոշման կայացման անհատական կարգավորման տեսակների և մտածողության ոճերի միջև: Պայմանավորված նրանով, որ որոշման կայացման անհատական կարգավորման տեսակների գործոնների բաշխվածությունը նորմալ չի, իրականացել ենք կոռելյացիա ըստ Սպիրմենի գործակցի: Շատ հետաքրքիր է ,որ առկա է ստատիստիկ նշանակալի բացասական կապ զգոնության և անալիտիկ մտածողության ոճի միջև ($r=-0.247$, $p=0.049$): Ջգոնությունը նպատակի ճշգրտում ու այլընտրանքների դիտարկում է, որը կապված է տեղեկատվության փնտրման և ընտրության գնահատման հետ: Ջգոնությունը դիտարկվում է դրական տեսակետից, քանի թույլ է տալիս ռացիոնալ որոշումներ կայացնել: Իսկ անալիտիկ մտածողության ոճին բնորոշ է պրոբլեմների տրամաբանական, մեթոդական, մանրամասն՝ դետալների վրա հիմնված, լուծման ձևը: Մինչ որոշում կայացնելը «անալիտիկները» կազմում են մանրամասն նախագիծ, ծրագիր և աշխատում են հավաքել որքան հնարավոր է շատ տեղեկատվություն:

Հայտնաբերվել է նաև ստատիստիկ նշանակալի բացասական կապ շախմատային վարկանիշի և նեյրոտիզմի միջև ($r=-0.447$, $p=0.009$): Որքան բարձր է վարկանիշը այնքան ցածր է նեյրոտիզմը: Իհարկե շախմատիստի վարկանիշը արդյունավետության միակ չափանիշը չէ, սակայն որոշ չափով կարելի է խոսել նեյրոտիզմի մակարդակի և արդյունավետության հակադարձ լինելու մասին:

Հետազոտության արդյունքները ամփոփելով կարող ենք ասել, որ առկա են ստատիստիկ նշանակալի կապեր անձնային գծերի, որոշման կայացման անհատական կարգավորման միջոցների, մտածողության ոճերի , շախմատի վարկանիշի միջև:

Գրականություն

1. Հայրապետյան Դ.Ռ . Շախմատային հոգեբանության կիրառական հիմնախնդիրները, // Մանկավարժության հիմնական խնդիրներ. Եր. Չանգակ-97, 2008, 176 էջ:

2. **Аникеев Ю. В.** Обоснование значимости психологической подготовки спортсменов в интеллектуальных видах спорта // <https://www.sportpedagogy.org.ua/html/journal/2009-07/09ayvais.pdf>
3. **Крогиус Н.В.** Психология шахматного творчества. – М.: Физкультура и спорт, 1981.- 183 с
4. **Лаврова Н. А.** Психологические особенности принятия решений: влияние контекста // Педагогика и психология образования. 2011. №2. С. 99-104
5. **Abduraximov Q .** Psychological peculiarity of intellectual activity // European Journal of Research and Reflection in Educational Sciences Vol. 3 No. 2, 2015
6. **Appelt K. C., Milch K. F., Handgraaf M. J. J., Weber, E. U.** (2011). The Decision Making Individual Differences Inventory and guidelines for the study of individual differences in judgment and decision-making research. Judgment and Decision Making, 6(3), pp.252-262.
7. **Balkis, M., & Bayezid Isiker, G.** (2005). The relationship between thinking styles and personality types. Social Behavior and Personality: An international journal, 33, p.283-294.
8. **Huitt, W.** (1992). Problem solving and decision making: Consideration of individual differences using the Myers-Briggs Type Indicator. Journal of Psychological Type, 24, p.33-44
9. **Zhang L.F** Are Thinking Styles and Personality Types Related? Educational Psychology, 2000, v. 20 n. 3, p. 271-283

ПРОЯВЛЕНИЕ СТИЛЕЙ МЫШЛЕНИЯ И ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ В ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ(НА ПРИМЕРЕ ШАХМАТ)

Манукян М. А. (ЕГУ, Ереван, Армения)

Статья посвящается изучению связи особенностей стилей принятия решений, мышления и личностных черт в интеллектуальной деятельности шахматиста. С этой целью было проведено исследование, в котором приняли участие шахматисты и контрольная группа (люди с техническим образованием). Были использованы адаптированные на армянском языке психологические тесты. Вывелись статистически важные связи между личностными чертами, индивидуальными стилями принятия решений и стилями мышления.

Ключевые слова. *Стили мышления, интеллектуальная деятельность, индивидуальный стиль принятия решений, личностные черты, шахматисты.*

**MANIFESTATION OF THINKING AND DECISION MAKING STYLES IN
INTELLECTUAL ACTIVITY (ON THE EXAMPLE OF CHESS)**

Manukyan M.A. (YSU, Yerevan, Armenia)

The article is devoted to the study of the relationship of features of decision-making styles, thinking and personality traits in the intellectual activity of a chess player. For this purpose, a study was conducted in which chess players and a control group (people with technical education) took part. Psychological tests adapted in Armenian were used. There are statistically significant connections between personality traits, individual decision-making styles, and thinking styles.

Keywords. *Thinking styles, intellectual activity, individual decision-making style, personality traits, chess players.*